ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- ապրիլի 2021 թվականի №---Ա

ք. Երևան

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշմամբ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ԼՋ №0001 լիցենզիայի (այսուհետ՝ ԼՋ №0001 լիցենզիա) պայմանների 11-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը տեխնիկական հնարավորությունների դեպքում պարտավոր է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման կամ շահագործման նպատակով թույլատրել միանալ ջրային համակարգին կամ պայմանագրի հիման վրա թույլատրել դրա օգտագործումը, եթե այն չի վտանգում ծառայությունների մատուցմանը, չի հանգեցնում լիցենզիայի պայմանների կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմատիվ պահանջների խախտմանը: Լիցենզավորված անձի կողմից սահմանված՝ ջրային համակարգին միացման պահանջները պետք է լինեն հրապարակային, հիմնավոր և ոչ խտրական,

բ) «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սույն թվականի փետրվարի 9-ին դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով, որ դեռևս 2019 թվականից Արզական-Երևան ջրատարի վրա մտադիր է կառուցել փոքր հիդրոէլեկտրակայան, ինչի ուղղությամբ արդեն իսկ իրականացվել են աշխատանքներ և ներդրումներ, սակայն չի կարողանում նախաձեռնությունը հասցնել ավարտին, քանի որ Ընկերությունն անհիմն կերպով մերժում է համապատասխան ջրատարին միանալու թույլտվության տրամադրումը՝ խախտելով ինչպես ԼՋ №0001 լիցենզիայի պայմանների 11-րդ կետի, այնպես էլ

Հայաստանի Հանրապետության կառավարության, Ընկերության և «Վեոլիա Օ-Կոմպանի Ժեներալ դեզ Օ» ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «ՆՈՐ ԱԿՈՒՆՔ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի 4-րդ հոդվածի 4.1.(2) ենթակետի պահանջը,

գ) Հանձնաժողովը, հաշվի առնելով «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սույն թվականի փետրվարի 9-ի գրությունը, Ընկերությանն ուղղված սույն թվականի փետրվարի 10-ի №ՍԾ/34.1-Մ2-5/394-2021 գրությամբ հայտնել է բարձրացված հարցը հնարավորինս սեղմ ժամկետում վերստին քննարկելու և արդյունքների մասին հանձնաժողովին տեղեկացնելու անհրաժեշտության մասին, քանի որ Ընկերության կողմից Արզական-Երևան ջրատարի վրա կառուցվելիք փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ստանալու հայտ Հանձնաժողով չի ներկայացվել և չեն մատնանշվել «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թույլտվություն չտրամադրելու ԼՋ №0001 լիցենզիայով սահմանված հիմքերը,

դ) Ընկերությունը, 2021 թվականի մարտի 3-ի և 12-ի համապատասխանաբար №ՄԾ/4547 և №ՄԾ/5458 գրություններով հայտնել է, որ Վեոլիա Գրուպը հեռանկարային ծրագրով նպատակ ունի զարգացնել իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում և ըստ այդմ՝ ներդրումներ կատարել նաև էներգետիկայի բնագավառում, մասնավորապես՝ բացառիկ օգտագործման իրավունքով իրեն հանձնված և իր կողմից շահագործվող ջրային համակարգերի վրա նախատեսելով կառուցել փոքր հիդրոէլեկտրակայաններ և դրանց շահագործմամբ արտադրել էներգիա: Վեոլիա Գրուպը ոչ թե բիզնես նպատակ է հետապնդում, ինչն առկա է մյուս սուբյեկտների մոտ տվյալ գործունեությամբ զբաղվելու դեպքում, այլ առաջիկայում էներգետիկ դաշտի ազատականացման արդյունքում նպատակ ունի ջրամատակարարման համակարգն առավելագույն դարձնել ինքնաբավ և փոքր հիդրոէլեկտրակայանների միջոցով արտադրված էներգիան օգտագործել սեփական կարիքների համար՝ դրանով զսպելով մատուցվող ծառայությունների սակագների բարձրացումը: Ընկերությունը տեղեկացրել է նաև, որ հետաքրքրված է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցմամբ, այդ թվում՝ Արզական-Երևան ջրատարի վրա՝ «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից հայցվող վայրում: Ընկերության կողմից

կառուցվելիք փոքր հիդրոէլեկտրակայանով նախատեսվում է ապահովել Արզնի պոմպակայանի էլեկտրամատակարարումը: Միաժամանակ Ընկերությունը մատնանշել է «Էներգետիկայի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով և Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 4-րդ կետի 1-ին ենթակետով ամրագրված իրավակարգավորումն առ այն, որ լիցենզավորման ենթակա չէ բացառապես սեփական կարիքների համար ջերմային և էլեկտրական էներգիայի համակցված և էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը՝ արտադրության ժամանակահատվածում: Հետևաբար գույքի սեփականատերը՝ ի դեմս ջրային կոմիտեի, և գույքը շահագործողը՝ ի դեմս Ընկերության, շահագրգռված են տվյալ հատվածում սեփական կարիքների համար արտադրել էլեկտրական էներգիա, որի նպատակն ամենևին ոչ թե շահույթ ստանալն է, այլ սպառողների լայն զանգվածին, առանց սոցիալական բեռի ավելացման, առավել մատչելի սակագնով ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցելը: Ընկերությունը, նպատակ ունենալով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցմամբ և շահագործմամբ մեղմել մանրածախ ծառայությունների բազիսային սակագները, մշակել և ջրային կոմիտե է ներկայացրել վարձակալության պայմանագրում համապատասխան լրացում կատարելու մասին համաձայնագրի նախագիծ՝ միաժամանակ տեղեկացնելով, որ փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման լիցենզիայի ստացման համար մշակում է բիզնես ծրագիր,

ե) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2021 թվականի մարտի 18-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ ԼՋ№0001 լիցենզիայի պայմանների 11-րդ կետով սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, ինչի վերաբերյալ Ընկերությունը տեղեկացվել է 2021 թվականի մարտի 19-ի №ԳԲ/34.1-Մ2-5/782-2021 գրությամբ,

զ) հարուցված վարչական վարույթի շրջանակում «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը 2021 թվականի մարտի 25-ի №ՄԾ/6940 գրությամբ վերստին հայտնել է այդ թվում՝ Արզական-Երևան ջրատարի վրա («ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից հայցվող վայրում) փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման իր մտադրության և այդ նպատակով մինչև սույն թվականի ապրիլի 5-ը Հանձնաժողով համապատասխան հայտի ներկայացման մասին,

ինչից ելնելով՝ խնդրել է կարճել հարուցված վարչական վարույթը՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը: Այնուհետև, 2021 թվականի ապրիլի 2-ի №ՄՇ/7913 և №ՄՇ/7914 գրություններով Ընկերությունը Հանձնաժողովի դիրքորոշմանն է ներկայացրել Արզական-Երևան ջրատարի վրա «Նոր Հաճն» փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու գործարար ծրագիր և հայտնել, որ իր 2021 թվականի հունվարի 15-ի №ՄՇ/634 գրությամբ ոչ թե մերժել է «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, այլ ներկայացրել է դիրքորոշում ջրատարի սեփականատեր ջրային կոմիտե՝ չթույլատրել որևէ այլ կազմակերպության նշված հանգույցում կառուցել փոքր հիդրոէլեկտրակայան՝ ներկայացնելով Ընկերության դիրքորոշման նախապայմաններն ու հիմանավորումները,

է) վարչական վարույթի շրջանակում «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2021 թվականի մարտի 30-ի №3-23/2021 գրությամբ վերահաստատել է իր սույն թվականի փետրվարի 9-ի գրությամբ հայտնած դիրքորոշումը,

ը) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է ԼՋ№0001 լիցենզիայի պայմանների 11-րդ կետը, մասնավորապես՝ հիշյալ իրավակարգավորման համաձայն՝ Ընկերության կողմից «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միացման կամ դրա օգտագործման թույլտարումը կարող էր մերժել միայն այն պարագայում, եթե առկա չէ տեխնիկական հնարավորություն, եթե այն վտանգում է ծառայությունների մատուցմանը, հանգեցնում է լիցենզիայի պայմանների կամ օրենսդրությամբ սահմանված նորմատիվ պահանջների խախտմանը: Մինչդեռ Ընկերությունը, ինչպես նախքան վարչական վարույթի հարուցումը, այնպես էլ դրանից հետո Հանձնաժողովին ուղղված իր որևէ գրությամբ չի հիմնավորել վերը նշված հանգամանքների առկայությունը: Ընդհակառակը, Ընկերությունն ի սկզբանե համապատասխան թույլտվության չտրամադրումը հիմնավորել է նույն ջրատարի նույն հատվածում փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու իր մտադրությամբ, ինչը, սակայն, չի բխում ԼՋ№0001 լիցենզիայի պայմանների 11-րդ կետի պահանջից: Ընկերության կողմից առ այսօր Հանձնաժողով չի ներկայացվել նաև քննարկվող հատվածում կառուցման ենթակա փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու հայտ: Ավելին, ջրային համակարգի օգտագործումը պետք է լինի հավասար պայմաններով՝ անկախ այն հանգամանքից, թե ով է մտադրվել կառուցել փոքր

հիդրոէլեկտրակայան՝ Ընկերությունը, թե մեկ այլ ընկերություն: Անդրադառնալով վարչական վարույթի շրջանակում Ընկերության կողմից ներկայացված փաստարկներին՝ Հանձնաժողովի գնահատմամբ դրանք որևէ կերպ չեն կարող դիտվել որպես «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով ջրային համակարգին միացման կամ դրա օգտագործման թույլտվության չտրամադրման օբյեկտիվ պատճառներ, հիշյալ թույլտվությունն առկա պայմաններում ենթակա է տրամադրման և սույն վարչական վարույթի կարճման հիմքերը բացակայում են, և

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. ԼՋ№0001 լիցենզիայի պայմանների 11-րդ կետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Հանձնարարել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկշաբաթյա ժամկետում «ՍԻԹԻՄԱՍՏԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման նպատակով թույլատրել միանալ ջրային համակարգին կամ պայմանագրի հիման վրա թույլատրել դրա օգտագործումը՝ այդ մասին տեղեկացնելով Հանձնաժողովին:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
--- ապրիլի 2021թ.